

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2**

ք. Երևան

«31» օգոստոսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2 ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.



ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուին ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 547 016 434 (հինգ հարյուր քառասունյոթ միլիոն տասնվեց հազար չորս հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 91 169 406 (իննսունմեկ միլիոն մեկ հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր վեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախադրեցվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ծանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը.

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկի ձևով ներկայացված որակավորման և համաձայնագրի կնքվի. եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և

պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827


Գլխավոր քարտուղար



ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0043, Շարուրի 36/2
«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500130861408
ՀՎՀՀ 04412536

Տնօրեն՝



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ Արմավիրի մարզի գ.Արգինայի միջնակարգ դպրոցի
 տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1.1 Համաշինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ				
1	V-րդ կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով	խմ	1490	5800	8,642,000
2	Փխրեցված V-րդ կարգի գրունտի մշակում 0 65 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով. բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	1490	623.7	929,313
3	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	1490	1500	2,235,000
4	Փոսորակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	50	3969	198,450
5	Հետիցքի համար պահանջվող գրունտի մշակում հանքավայրում էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	խմ	990	623.7	617,463
6	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	990	500	495,000
7	Գրունտի ետիցք հատակների տակ բուլդոզերով	խմ	890	396.9	353,241
8	Գրունտի աստիճանաբար տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	890	1150	1,023,500
9	Գրունտի ետիցք հիմքերի ծոց ձեռքով. տոփանումով	խմ	150	3402	510,300
	Ընդամենը հողային աշխատանքներ			0.0	15,004,267
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից ցածր			0	
10	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B-7,5 դասի բետոնով	խմ	49.8	44122	2,197,259
11	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	41 3	47138	1,946,804
12	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	287 95	49000	14,109,550
13	Ամրան Փ8A240C	տն	7 121	360000	2,563,560
14	Ամրան Փ16A500C	տն	5 572	360000	2,006,028
15	Ամրան Փ18A500C	տն	4.442	360000	1,598,976
16	Ամրան Փ25A500C	տն	0.115	360000	41,472
17	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5 1	68070	347,157
18	Ամրան Փ8A240C	տն	0 510	360000	183,600
19	Ամրան Փ22A500C	տն	1 742	360000	627,120
20	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0.232	720598	167,251

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
21	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով	խմ	169 65	70000	11,875,500
22	Ամրան Փ6, 8A240C	տն	1.452	360000	522,756
23	Ամրան Փ10A500C	տն	2.599	360000	935,640
24	Ամրան Փ12A500C	տն	8 407	360000	3,026,484
25	Ամրան Փ16A500C	տն	0.431	360000	155,016
26	Ամրան Փ22A500C	տն	1.325	360000	477,144
27	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 238	720598	171,142
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից ցածր			0 0	42,952,460
	ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից բարձր			0	
28	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	59.5	68070	4,050,168
29	Ամրան Փ8A240C	տն	2 341	360000	842,756
30	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0 050	360000	18,108
31	Ամրան Փ22A500C	տն	6.940	360000	2,498,364
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0 010	720598	7,494
33	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.5	72595	36,297
34	Ամրան Փ8A240C	տն	0.023	360000	8,424
35	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.051	360000	18,432
36	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	10 20	72595	740,466
37	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	123 42	62000	7,652,040
38	Ամրան Փ6, 8A240	տն	3.220	360000	1,159,362
39	Ամրան Փ8A500C	տն	0 643	360000	231,372
40	Ամրան Փ12A500C	տն	1.797	360000	646,978
41	Ամրան Փ16A500C	տն	1.497	360000	538,740
42	Ամրան Փ18A500C	տն	4.019	360000	1,446,876
43	Ամրան Փ25A500C	տն	0 092	360000	33,192
44	Ամրան Փ28A500C	տն	0.744	360000	267,804
45	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.190	720598	136,914
46	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	23.14	72595	1,679,842
47	Ամրան Փ6, 8A240	տն	0 534	360000	192,384
48	Ամրան Փ12A500C	տն	1 357	360000	488,376
49	Ամրան Փ18A500C	տն	0.149	360000	53,568
50	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սևամեջ բետոնե թյուկներով	խմ	149 4	28000	4,182,976
51	Նույնի բետոնացում, B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	95 53	69000	6,591,570
52	Ամրան Փ6, 8A240C	տն	0 724	360000	260,737
53	Ամրան Փ10A500C	տն	8.657	360000	3,116,664

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
54	Ամրան Փ12A500C	տն	7 041	360000	2,534,616
55	Ամրան Փ16A500C	տն	1 002	360000	360,576
56	Միաձույլ ե/ք բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1 63	81457	132,776
57	Ամրան Փ6A240	տն	0.051	360000	18,360
58	Ամրան Փ12A500C	տն	0.221	360000	79,560
59	Միաձույլ ե/քբետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	186.5	63500	11,842,750
60	Ամրան Փ6,8A240	տն	0.357	360000	128,448
61	Ամրան Փ12A500C	տն	16.051	360000	5,778,468
62	Ամրան Փ14A500C	տն	5.701	360000	2,052,468
63	Ամրան Փ18A500C	տն	0.026	360000	9,216
64	Միաձույլ ե/ք հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	6 80	72595	493,644
65	Ամրան Փ8A240	տն	0 184	360000	66,096
66	Ամրան Փ18A500C	տն	0 367	360000	132,192
67	Միաձույլ ե/ք հովհարի պատրաստում +2.7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1.7	72595	123,411
68	Ամրան Փ8A240	տն	0.029	360000	10,332
69	Ամրան Փ8A500C	տն	0.073	360000	26,208
70	Ամրան Փ12A500C	տն	0.008	360000	2,880
71	Ամրան Փ16A500C	տն	0.046	360000	16,560
72	Ամրան Փ18A500C	տն	0.015	360000	5,400
73	Բետոնե աստիճանների պատրաստում 0,00 նիշից դեպի +0,45նիշ B-7.5 դասի բետոնով	խմ	2.3	67335	154,870
74	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/քբետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0.45նիշից դեպի +3,3նիշ)	խմ	1 9	72595	137,930
75	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0 5	67335	33,667
76	Ամրան Փ8A240	տն	0.055	360000	19,692
77	Ամրան Փ16A500C	տն	0.274	360000	98,604
	Ընդամենը ե/քբետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր			0.0	61,158,628
	Միջնորմներ			0.0	
78	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397.58	3900	1,550,562
79	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	110 8	23000	2,547,710
80	Ամրան Փ8A500C	տն	2 760	360000	993,450
	Ընդամենը միջնորմներ			0.0	5,091,722
	Դռներ և պատուհաններ			0.0	
81	Ալյումինե. ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	83689.2	3,038,554
82	Ալյումինե. ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1 92	83689.2	160,683

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
83	Այուամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	60827.76	72.993
84	Այուամինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խուլ) մաս	քմ	17.04	38102 4	649,265
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2 30	40279.68	92,804
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խուլ) մաս և V-2 խուլ վիտրաժ	քմ	25 0	40279.68	1,008,200
87	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1	հատ	9	57834	520,506
88	Ներքին, խուլ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2----Դ-3	հատ	41	57834	2,371,194
89	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4----Դ-4*	հատ	4	114715.44	458,862
90	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1.7	163296	277,669
91	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԲՓ-021 նախաներկով	քմ	3 4	1837.08	6,246
92	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.3	44661.456	234,598
93	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12.6	27216	342,922
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89.3	33366 816	2,979,990
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	25610.256	1,643,461
96	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	80 1	4082.4	326,837
	Ընդամենը դռներ և պատուհաններ			0.0	14,184,785
	Հատակներ			0.0	
97	Հողի տոփանում խճաքարով	քմ	1480	850	1,258,000
98	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	222 0	44000	9,768,000
99	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ)	տն	12 3	360000	4,422,240
100	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1644.6	2800	4,604,768
101	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ բիտումի մածիկի վրա	քմ	1447 8	2199	3,184,015
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	540.46	2123	1,147,405
103	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1104.1	2246	2,479,781
104	Մամլագրանիտե (սվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	417.12	9200	3,837,504

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
105	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16 71	11855	198,105
106	Նույնի. ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	16.71	2123	35,476
107	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	զժմ	171.8	1983	340,645
108	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատակի երեսապատում. սոսնձումով	քմ	123.34	9000	1,110,060
109	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զժմ	80 1	1983	158,802
110	Վինիլային (հետերոգեն ՊՎԲ 2մմ հաստ 0,7մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում. ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	768.4528	9085	6,981,086
111	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԲ 4.5մմ հաստ 1մմ հաստ հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում. ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	10500	2,703,070
112	Կալրոլինից (4.5մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում. ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116 8	7203	841,288
113	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	4536	155,676
	Ընդամենը հատակներ			0.0	43,225,921
	Տանիք			0.0	
114	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3 681	780000	2,871,024
115	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ. ամրան Փ12A500C)	տն	0.181	780000	141,099
116	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6 616	780000	5,160,480
117	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0 196	780000	152,702
118	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ. պարզունակներ)	տն	16 043	780000	12,513,540
119	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ. անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1 137	780000	886,473
120	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	27.853	45204	1,259,067
121	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182 7	5103	6,035,408
122	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	30.9	180347	5,572,733
123	Նույնի երեսում (տակից) ОСП - սալերով 10մմ հաստ. (оринетированно-стружечная плита)	քմ	1540 1	3451	5,314,245

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
124	Գոլորշամեկուսիչ շերտի փոում	քմ	1540 1	1401	2,158,086
125	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամքակե սալերով	քմ	1540 1	2696	4,151,449
126	ՕՇՈ սալերի տեղադրում 10մմ հաստ (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	1781 1	8000	14,248,800
127	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	1781.1	4150	7,392,349
128	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	լսմ	30 9	680	21,024
129	ՕՇՈ սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	2041	606,604
130	Ջրհորղանների պատրաստում 0 5մմ հաստ ցինկապատ թիթեղից, զունավոր ներկվածքով	գծմ	136 5	3689	503,482
131	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	9252	138,783
132	Ջրիս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	76.18	3990	303,965
133	Էլակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0 707	780000	551,460
134	Նոյնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	45644	32,270
	Ընդամենը տանիք			0 0	70,015,043
	Հարդարման աշխատանքներ			0.0	
135	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484 24	2,100	5,216,904
136	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	2,100	657,342
137	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	4,658	47,192
138	V-2, V-4, V-5 վիտրամենների վերին մասի լցափակում գիպսկարտոնե հարթասալերով	քմ	12.9	4,497	58,007
139	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	891 67	2,668	2,378,614
140	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98.22	2,668	262,011
141	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2516 2	2,271	5,714,675
142	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313 02	2,241	701,335
143	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	1316 39	2,317	3,050,190
144	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	43 04	2,317	99,727
145	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364 66	2,728	994,765
146	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	301 16	8,476	2,552,519
147	Կախովի առաստաղ գիպսաստվարաթյթե հարթասալերով 9.5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	424.72	4,497	1,909,827
148	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզոնական	332	1,024	340,071
149	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55 18	4,322	238,496

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
150	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0 593	737,100	437,006
151	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.593	41,675	24,708
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				24,683,390
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
152	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	31	6500	201,500
153	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	20.6	42000	865,200
154	Բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	10 1	45000	454,500
155	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ բազալտե սալերով	քմ	13 2	16000	211,200
156	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ բազալտե սալերով	քմ	55 2	12000	662,400
157	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	19.4	6500	126,100
158	Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	3 2	42000	134,400
159	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	9.15	42000	384,300
160	Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնով	խմ	1.26	45000	56,700
161	Ամրան Փ10A500C	տն	0.10	360000	36,000
162	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնածող	տն	0 114	560000	63,689
163	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 114	35000	3,981
	Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ			0.0	3,199,969
	Արտաքին հարդարում			0.0	
164	Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ) բազալտե մանրաթելային սալերով	քմ	1379.7	2698 92	3,723,700
165	V-4, V-5 արտաքին վիտրաժների վերևի մասի երեսապատում այլոմինե "Alukobond" թիթեղով	քմ	3.5	34020	119,070
166	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1278 8	4082.4	5,220,410
167	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1278 8	3742.2	4,785,376
168	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	153.0	20412	3,123,036
